

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի տրամադրման մրցույթի կատարման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է 2018թ.մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ «1» որոշմամբ

Մրցույթի ծածկագիրը՝ «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ»

Վարձատուն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ, որը գտնվում է ք.Երևան, Կորյունի 2 հասցեում, հայտարարում է մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով: Մրցույթի արդյունքում հաղթող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ք.Երևանի, Կորյունի 2 հասցեում գտնվող՝ լաբորատոր մասնաշենքի առաջին հարկի ճաշարան-սրճարան՝ 33 մ/ք, կենտրոնական մասնաշենքի առաջին հարկի ճաշարան-սրճարան՝ 91,7 մ/ք և վարչական մասնաշենքի երկրորդ հարկի ճաշարան-սրճարան՝ 362 մ/ք անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն մրցույթին մասնակցելու հավասար իրավունք:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն մրցույթի հրավերով:

Մրցույթում հաղթող մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ բալերի առավելագույն քանակ շնորհված մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Մրցույթի հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել Վարձատուին, մինչև սույն հայտարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի պաշտոնական «www.ysmu.am» կայքի ԵՊԲՀ/Գնումներ և հաշվետվություններ/Հայտարարություններ բաժնում, և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակման օրվանից հաշված՝ 25-րդ օրը ժամը 12:00-ը: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար Վարձատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Վարձատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Վարձատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն մրցույթին մասնակցելու իրավունքը:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Կորյունի 2 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 12:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա ք.Երևան, Կորյունի 2 հասցեում, «2018 » «հոկտեմբերի» «12»-ին ժամը 12:00-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Անահիտ Հարությունյանին

Հեռախոս՝ 043440787

Էլ. փոստ procurement5.ysmu@gmail.com

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

*Հաստատված է
մրցույթի գնահատող հանձնաժողովի
2018թ. սեպտեմբերի 11-ի թիվ «1» որոշմամբ*

ՀՐԱՎԵՐ

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց
օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու
իրավունքի տրամադրման մրցույթի**

Հայաստան, ք. Երևան

2018 թ.

*Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն
ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի տրամադրման մրցույթի հրավերի

ՄԱՍ 1.

1. Հրավերում կիրառվող հասկացություններ
2. Ընդհանուր դրույթներ
3. Մրցույթի առարկայի բնութագիրը
4. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
5. Հրավերի պարզաբանումը, հրավերում փոփոխություն կատարելու և մրցույթ անցկացնելուց հրաժարվելու կարգը
6. Հայտը պատրաստելու և ներկայացնելու կարգը
7. Հայտի գնային առաջարկը
8. Հայտի ոչ գնային առաջարկը
9. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
10. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
11. Պայմանագրի կնքումը
12. Մրցույթը չկայացած հայտարարելը
13. Հավելվածներ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով անցկացվող մրցույթի հայտարարության:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [«procurement5.ysmu@gmail.com»](mailto:procurement5.ysmu@gmail.com)

1. ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն մրցույթի վերաբերյալ փաստաթղթերում կիրառվում են նաև հետևյալ հասկացություններն ու հապավումները.

վարձատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ,

մրցույթ՝ վաճառք, որի հաղթող է համարվում այն անձը, ով առաջարկել է գործառնական կառավարման իրավունքով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության գնային և ոչ գնային լավագույն առաջարկը,

գնային լավագույն առաջարկ՝ մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված վարձավճարի նվազագույն չափը գերազանցող ամենաբարձր գնային առաջարկ,

ոչ գնային լավագույն առաջարկ՝ հրավերի պահանջներին բավարարող, վարձակալությամբ տրվող տարածքներում ուսանողներին հանրային սննդի մատուցման լավագույն /ոչ գնային/ մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված պարտադիր և մասնակցի կողմից առաջարկվող լրացուցիչ պայմաններ, որոնք գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքում ստացել են բալերի առավելագույն քանակ,

մրցույթային փաստաթղթեր՝ փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է պահանջներ հայտատուին և մրցույթի չափանիշներ, մրցույթի առարկայի բնութագրիչ հատկանիշների, պայմանների վերաբերյալ տեղեկատվություն,

գնահատող հանձնաժողով՝ մրցույթի կազմակերպչի կողմից ձևավորված կոլեգիալ մարմին՝ մրցույթ անցկացնելու և հաղթողին որոշելու համար,

պայմանագիր՝ մրցույթի կազմակերպչի կողմից հաղթողի հետ կնքվող պայմանագիր՝ անշարժ գույքի վարձակալության վերաբերյալ,

հայտ՝ մասնակցի կողմից մրցույթին մասնակցելու համար ներկայացվող մրցույթով սահմանված տեղեկություններ և փաստաթղթեր,

հայտատու (մասնակից)՝ այն անձը, ով ծանոթացել է մրցույթ անցկացնելու մասին հայտարարությանը և/կամ մրցույթային փաստաթղթերին և մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել և հավակնում է վարձակալության պայմանագիր կնքել՝ անշարժ գույքի վերաբերյալ,

պայմանագրի նախնական գին՝ գործառնական կառավարման իրավունքով անշարժ գույքի օգտագործման վարձավճարի նախնական չափը, որը որոշվում է մրցույթի կազմակերպչի կողմից՝ վարձակալության իրավունքի շուկայական արժեքի չափի որոշման անկախ գնահատողի կողմից տրամադրված հաշվետվության հիման վրա (հիմք՝ ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ հաստատված կարգ վարձակալությամբ տրամադրվող՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների հաշվառկման, Հավելված N 5, 2-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերություն),

վարձակալության օբյեկտ՝ վարձակալության համար նախատեսված ոչ բնակելի տարածքներ,

մրցույթի կազմակերպիչ (Վարձատու)՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ,

տեղեկագիր՝ մրցույթի մասին տեղեկատվություն տեղադրելու համար մրցույթի կազմակերպչի՝ www.ysmu.am կայքի ԵՊԲՀ/Գնումներ և հաշվետվություններ/Հայտարարություններ բաժին,

գնահատման համակարգ՝ բալային համակարգ,

մրցույթի հաղթող՝ մրցույթի այն մասնակիցը, ում գնային և ոչ գնային առաջարկը գնահատող հանձնաժողովի կողմից բալային համակարգով գնահատման արդյունքում հավաքել է բալերի առավելագույն քանակը,

մրցույթի առարկա՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունք:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՆԵՐ

2.1 Մասնակիցների կողմից մրցույթի մասին փաստաթղթերի ուսումնասիրություն

1. Մասնակիցը պարտավոր է ամբողջությամբ ուսումնասիրել մրցույթային փաստաթղթերը:

2. Անհավաստի տեղեկություններ ներկայացնելը կամ մրցույթի մասին փաստաթղթերի վերաբերյալ պահանջներին չհամապատասխանող հայտ ներկայացնելը մասնակցին ենթարկում են ռիսկի, որը կհանգեցնի իր կողմից ներկայացված հայտի մերժմանը:

3. Մրցույթային հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում հայտատուի կողմից անպաշտոն կերպով ձեռք բերված մրցույթի մասին փաստաթղթերի բովանդակության համար, և բոլոր դեպքերում ղեկավարվում է մրցույթի մասին պաշտոնական փաստաթղթերի տեքստով:

4. Մրցույթի անցկացման ընթացքում մասնակցի գործողությունները (անգործությունը) չպետք է պարունակեն անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 Մրցույթի առարկա՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի տրամադրում:

3.2 Տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք, պարտադիր և ոչ պարտադիր նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

3.3 Սույն հրավերով նախատեսված՝ վարձակալությամբ տրվող տարածքներում, ուսանողներին սննդի մատուցման համար, պահանջվում է վարձակալությամբ տրվող տարածքների սանիտարահիգիենիկ վերահսկողության, ինչպես նաև սննդի փորձարկումների պարբերաբար անցկացման կնքված պայմանագրի առկայություն հավատարմագրված լաբորատորիայի հետ, որի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվող տարածքների վարձակալության պայմանագրի գործողության ժամկետից:

4. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն մրցույթին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 1-ին մասի N2 հավելվածով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

4.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն մրցույթին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի, պայմանով, որ այդպիսի հայտատուների կողմից մինչ այդ ներկայացված հայտերը հետ չեն կանչվել:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայտերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

4.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

- 2) տեխնիկական միջոցներ,
 - 3) ֆինանսական միջոցներ,
 - 4) աշխատանքային ռեսուրսներ:
- 4.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր, կամ հայտը ներկայացնելու տարվա կամ դրան նախորդող մեկ տարվա ընթացքում իրականացրած լինի նմանատիպ գործունեություն: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն մրցույթի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն մրցույթի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն մրցույթի իմաստով նմանատիպ պայմանագրով և /կամ/ գործունեությամբ մատուցված ծառայություններ են համարվում՝ հանրային սննդի մատուցման ծառայությունները:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը՝

հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր պատշաճ ձևով իրականացրած լինելու դեպքում, հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որին կցվում են նախկինում կատարված պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

հայտը ներկայացնելու տարվա կամ դրան նախորդող մեկ տարվա ընթացքում նմանատիպ գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ դրա մասին հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի պատճենները:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական միջոցների առկայության մասին.

Սույն մրցույթի իմաստով անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական միջոցներ են համարվում այն միջոցները, որոնք անհրաժեշտ են, սակայն առկա չեն սույն հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելված, N 3 աղյուսակով սահմանված ցանկում:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված հայտարարությանը կից մասնակիցը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա լրացուցիչ տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները /միայն այն դեպքում երբ տեխնիկական միջոցները հանդիսանում են մասնակցի սեփականությունը կամ մասնակիցը ունի դրանց ժամանակավոր օգտագործման իրավունքը/, նրանց քանակները և շուկայական արժեքները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Տեխնիկական միջոցի քանակը	Տեխնիկական միջոցի շուկայական արժեքը
1	2	3	4	5	6
1				
2				

Սույն աղյուսակի 4-րդ սյունյակը լրացվում է միայն այն դեպքում երբ տեխնիկական միջոցները հանդիսանում են մասնակցի սեփականությունը կամ մասնակիցը ունի դրանց ժամանակավոր օգտագործման իրավունքը, հակառակ դեպքում 4-րդ սյունյակով պահանջվող տվյալները մասնակցի կողմից ներկայացվում են հաղթող մասնակցի ճանաճվելու դեպքում վարձակալության պայմանագիր կնքելու օրվանից հաշված 5 օրացույցային օրվա ընթացքում:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

4.6 Սույն մրցույթի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

4.7 Մասնակիցները կարող են սույն մրցույթին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն մրցույթին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:

5. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ, ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Ընդ որում պարզաբանումը կարող է պահանջվել մինչև սույն կետում նշված օրվա ժամը 12:00-ն (մրցույթի անցկացման վայրի ժամանակով): Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 3 օր առաջ:

Սույն կետում նշված հարցումը մասնակիցը ներկայացնում է հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

Հարցման մասին պարզաբանումն ուղարկվում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստից մասնակցի՝ հարցումը ստացված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

5.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է տեղեկագրում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

5.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից:

5.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրը փոփոխություն կատարելու մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

5.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

5.6 Տեղեկագրում մրցույթ անցկացնելու մասին հայտարարություն տեղադրած մրցույթի կազմակերպիչը իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան երեք օրացուցային օր առաջ:

5.7 Մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումը տեղեկագրում տեղադրվում է մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին որոշման կայացման օրվանից սկսած մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5.8 Մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին որոշման կայացման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի կազմակերպիչը համապատասխան ծանուցումներ է ուղարկում բոլոր հայտատուներին:

6. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Սույն մրցույթին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

6.2 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:
Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից, ընդ որում պատճենների վավերացում մասնակցի կողմից չի պահանջվում: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները: Փաստաթղթերի բոլոր էջերը պետք է լինեն հստակ և ընթեռնելի (այդ թվում ներկայացված փաստաթղթերի պատճենները, ներառյալ կնիքների և դրոշմակնիքների դրոշմվածքների մակագրությունները): Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն: Օտար լեզվով կազմված արտասահմանյան փաստաթղթերը հայտի կազմում ներկայացնելիս պետք է ուղեկցվեն պատշաճ վավերացված հայերեն թարգմանությամբ:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.3 Սույն հրահանգի 6.2 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

- 1) մրցույթի կազմակերպչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),
- 2) մրցույթի ծածկագիրը,
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը,
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

6.4 Սույն հրահանգի 6.2 և 6.3 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

6.5 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն մրցույթի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված «30»րդ օրվա ժամը 12:00-ն, ք.Երևան, Կորյունի 2 հասցեով:

Մրցույթի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Անահիտ Հարությունյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

6.6 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) մրցույթին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին /մասնագիտական փորձառության/ իր համապատասխանության մասին և նույն հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով պահանջված փաստաթղթերը:

4) իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական միջոցների առկայության մասին և տեղեկանք կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող լրացուցիչ տեխնիկական միջոցների մասին:

5) իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

6) իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

7) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

8) իր կողմից հաստատված ոչ գնային առաջարկ.

9) սույն հրավերով նախատեսված հավատարմագրված լաբորատորիայի պայմանագրի պատճենը.

10) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն մրցույթի շրջանակներում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

11) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն մրցույթի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

12) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայտերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

13) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

14) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն մրցույթին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

15) հայտատուի՝ իրավաբանական անձի անունից գործողություններ իրականացնող անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթ (նշանակելու կամ ընտրելու մասին որոշման պատճեն կամ ֆիզիկական անձին պաշտոնում նշանակելու հրաման, որի համաձայն այդ ֆիզիկական անձը իրավունք ունի առանց լիազորագրի գործելու մասնակցի անունից (այսուհետ՝ ղեկավար): Այն դեպքում, եթե մասնակցի անունից գործում է այլ անձ, հայտը պետք է պարունակի նաև հայտատուի անունից գործողություններ իրականացնելու մասին լիազորագիր՝ ստորագրված հայտատուի ղեկավարի կողմից (իրավաբանական անձանց համար) կամ այդ ղեկավարի կողմից լիազորված անձի կողմից կամ այդ լիազորագրի նոտարական վավերացմամբ պատճեն: Այն դեպքում, եթե նշված լիազորագիրը ստորագրված է հայտատուի ղեկավարի կողմից լիազորված անձի կողմից, հայտը պետք է պարունակի նաև այդպիսի անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթ,

6.7 Հայտատուն կրում է հայտի պատրաստման և ներկայացման, մրցույթին մասնակցելու և վարձակալության պայմանագիր կնքելու հետ կապված բոլոր ծախսերը:

7. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

7.1 Տարածքների վարձակալության համար առաջարկվող գինը չի կարող պակաս լինել սույն հրավերով սահմանված վարձավճարի նվազագույն չափից և չի ներառում պայմանագրով սահմանված ժամանակահատվածում վարձակալության տարածքներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեությունից առաջացած բոլոր կոմունալ վճարները, տուրքերը, հարկերը, այլ վճարումների գծով ծախսերը որոնք ենթակա են վճարման վարձակալի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գնային առաջարկը ներկայացվում է մասնակցի կողմից սույն հրավերի N4 հավելվածով սահմանված ձևաչափին համապատասխան:

7.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե գնային առաջարկը բացակայում է, կամ լրացված է միայն թվերով:

7.3 Եթե տառերով և թվերով լրացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, ապա նախապատվությունը տրվում է տառերով լրացված գնային առաջարկին:

8. ՀԱՅՏԻ ՈՉ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

8.1 Ներկայացվում է մասնակցի կողմից սույն հրավերի N4.1 հավելվածով սահմանված ձևաչափին համապատասխան:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե ոչ գնային առաջարկը բացակայում է կամ լրացված է սույն հրավերի N4.1 հավելվածով սահմանված ձևաչափին անհամապատասխան:

9. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴԻՆԱՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9.1 Մրցույթի հայտը վավեր է մինչև համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն մրցույթը չկայացած հայտարարվելը:

9.2 Մասնակիցը, մինչև հայտերի ներկայացման սահմանված վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

9.3 Մասնակիցը չի կարող հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո, փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

10. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

10.1 Հայտերի բացումը կկատարվի հանձնաժողովի բացման նիստում՝ սույն մրցույթի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 12:00-ին, ք.Երևան, Կոյունի 2 հասցեում:

Հայտերի բացման նիստում՝

1) հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովի նախագահը ընթերցում է հայտեր ներկայացրած մասնակիցների ոչ գնային առաջարկները /մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված պարտադիր և ոչ պարտադիր և առկայության դեպքում՝ մասնակցի կողմից առաջարկվող լրացուցիչ պայմաններ/:

10.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի ընդհանուր գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, կամ ներկայացված գնային առաջարկը ցածր է սույն հրավերով սահմանված վարձավճարի նվազագույն չափից, կամ մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված և մասնակցի կողմից պարտադիր ներկայացման ենթակա՝ ոչ գնային առաջարկը բացակայում է, կամ ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, կամ բացակայում է հավատարմագրված լաբորատորիայի հետ կնքված պայմանագրի պատճենը:

10.3 Հաղթող մասնակիցը որոշվում է հայտերի գնահատման նիստում՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ բավերի առավելագույն քանակ ստացած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից բավերի հաշվառվող իրականացվում է՝ սույն հրավերի N5 հավելվածով սահմանված գնահատման համակարգով:

10.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայտերի բացման նիստի օրվա և ժամվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից պաշտոնական www.cba.am կայքում սահմանված փոխարժեքով:

10.5 Հանձնաժողովի, մրցույթի կազմակերպչի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ մասնակիցների առաջարկված գնային և ոչ գնային առաջարկների ամփոփման արդյունքում մասնակիցների հավաքած բավերի քանակի հավասարության դեպքում: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի բարձրացմանը կամ ոչ գնային պարտադիր կամ լրացուցիչ պայմանների բարելավմանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

10.6 Առաջարկված գնային և ոչ գնային առաջարկների հավաքած բալերի քանակի հավասարության դեպքում՝

ա. հաղթող մասնակիցին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում բավարար գնահատված հայտեր ներկայացված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան երրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած առաջարկների, որոշվում և հայտարարվում է հաղթող մասնակիցը, բայց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի օրվանից հաշված յոթ աշխատանքային օրում:

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների կողմից նոր առաջարկներ չեն ներկայացվում, մրցույթը հայտարարվում է չկայացած:

10.7 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային և ոչ գնային առաջարկի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

10.8 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան կամ ներկայացված գնային առաջարկը պակաս է սույն հրավերով սահմանված վարձավճարի նվազագույն չափից, կամ ոչ գնային առաջարկը բացակայում է կամ ոչ գնային առաջարկի մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված պարտադիր պայմանները ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, կամ բացակայում է հավատարմագրված լաբորատորիայի հետ կնքված պայմանագրի պատճենը, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում սույն կետում նշված առաջարկության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:

10.9 Եթե սույն հրավերի 10.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Ընդ որում մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացնում է սույն մրցույթին մասնակցելու դիմումում նշված էլեկտրոնային փոստից հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

10.10 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնետնաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնետնաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ մրցույթին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ մրցույթի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ մրցույթից:

10.11 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն:

10.12 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

3) արձանագրությունը պարտադիր պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

6) պայմանագրի նախնական (նվազագույն) գնի

7) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը:

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

4) Այն դեպքում, եթե մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո չի ներկայացվել ոչ մի հայտ, նշված արձանագրության մեջ տեղեկատվություն է մուտքագրվում մրցույթը չկայացած ճանաչելու մասին:

5) Արձանագրությունը ստորագրվում է գնահատող հանձնաժողովի բոլոր ներկա անդամների կողմից նիստի անցկացման օրը:

10.13 Եթե առկա է սույն հրավերի 1-ին մասի 10.8 կետով սահմանված դրույթները, ապա դրանց համար նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին է տրամադրում արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ տեղեկատվությունը: Հայտերի գնահատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

10.14 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

10.15 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

10.16 Հայտերի գնահատման նպատակով հրավիրվող նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է հաղթող մասնակցին՝ բալերի առավելագույն քանակ ստացած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Եթե մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է անբավարար, հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

10.17 Հաղթող մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը հաղթող մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած /բալերի առավելագույն քանակ հավաքած/ մասնակցին:

10.18 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Արձանագրությունը պարտադիր պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

1) տվյալներ՝ մասնակիցներին շնորհված բալերի վերաբերյալ:

2) շնորհված բալերի հիմնավորումները

3) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը:

4) հաղթող մասնակցի մասին

5) հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին

5) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

10.19 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր

եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

10.20 Սույն հրավերի 1-ին մասի 10.19 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

11.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ մրցույթի կազմակերպչի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Պայմանագրի կնքումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով:

11.2 Սույն հրավերի 1-ին մասի 10.18 կետով սահմանված ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի կազմակերպիչը ծանուցում է հաղթող մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

11.3 Հաղթող մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

11.4 Եթե հաղթող մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդ որում հաղթող մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը մրցույթի կազմակերպչին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է մրցույթի կազմակերպչի փաստաթղթաշրջանառության համակարգում: Մրցույթի կազմակերպչի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է հաղթող մասնակցին:

11.5 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 11.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել մրցույթի առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ հաղթող մասնակցի առաջարկված գնի նվազեցմանը:

11.6 Մրցույթի հաղթող մասնակցի հետ վարձակալության պայմանագրի կնքելուց հրաժարվելու կամ մրցույթի հաղթող մասնակցի կողմից պայմանագիրը կնքելուց հրաժարվելու դեպքում՝ մրցույթային հանձնաժողովի կողմից պայմանագրի կնքման մերժման համար հիմք հանդիսացող փաստերի հաստատման օրվան հաջորդող օրը կազմվում է պայմանագրի կնքելուց հրաժարվելու մասին արձանագրություն, որում պետք է պարունակվեն տեղեկություններ, այն անձի մասին, ում հետ կազմակերպիչը հրաժարվում է պայմանագրի կնքել, տեղեկություններ այն փաստերի մասին, որոնց հիման վրա մրցույթի կազմակերպիչը կամ հաղթող մասնակիցը հրաժարվում է պայմանագրի կնքել, ինչպես նաև այդպիսի փաստեր հաստատող փաստաթղթերի վավերապայմանները: Արձանագրությունը ստորագրվում է մրցույթային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից դրա կազմության օրը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է տեղեկագրում:

11.7 Վարձատուի ղեկավար մարմնի կամ պայմանագրի կողմ հանդիսացող անձի սեփականատիրոջ կամ ղեկավար մարմնի կամ սեփականության իրավունքի կրողի փոփոխության դեպքում համապատասխան վարձակալության պայմանագիրը չի դադարում գործելուց, և չի պահանջվում նոր մրցույթ անցկացնել մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

11.8 Այն դեպքում, եթե մրցույթի հաղթողը ճանաչվել է վարձակալության պայմանագիր կնքելուց խուսափած, մրցույթի կազմակերպիչը իրավունք ունի մրցույթի մասնակցին պայմանագիրը կնքել պարտադրելու, ինչպես նաև պայմանագրի կնքումից խուսափելու հետևանքով պատճառված վնասների հատուցման հայցով դիմել դատարան կամ կնքել պայմանագիր կնքելու առաջարկություն անել մրցույթի այն մասնակցի հետ, ում մասնակցության հայտին շնորհվել է հաջորդաբար տեղը հավաքած բալերի առավելագույն քանակ: Սույն իմաստով մրցույթի մասնակցի համար, ում հայտին շնորհվել է հաջորդաբար համարը, վարձակալության պայմանագրի կնքումը պարտադիր է:

12. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

12.1 Հանձնաժողովը սույն մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 3) պայմանագիր չի կնքվում:

12.2 Մրցույթը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի կազմակերպիչը տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

Հավելված N 1
«ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով
մրցույթի հրավերի

ԴԻՄՈՒՄ

մրցույթին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել

մասնակցի անվանումը

_____ -ի կողմից «ՎՄ-2018-1-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված

մրցույթի կազմակերպչի անվանումը

մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է

մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:

երկրի անվանումը

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____ :

մասնակցի անվանումը

հարկի վճարողի հաշվառման համարը

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____ :

մասնակցի անվանումը

էլեկտրոնային փոստի հասցեն

_____ (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

